ՀԻՍՈՒՍ
ՔՐԻՍՏՈՍԻ
ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԻ ՍՐԲԵՐԻ
ԵԿԵՂԵՑԻ

Սիրելի՛ ծնողներ

Նոր Կտակարանի ամենակարևոր ուղերձներից մեկն այն է, որ մենք կարող ենք խաղաղություն և ուրախություն գտնել Քրիստոսում, անկախ նրանից, թե մեր կյանքն ինչպիսին է: Այս ամսվա համարը նույն վկայությունն է պարունակում:

- Էջ Ը4. տղան մխիթարվում է, երբ վատ երազներ է տեսնում:
- Էջ Ը8. Դաունի սիրդրոմ ունեցող աղջկան հիշեցնում են, որ Երկնային Հայրը սիրում է իրեն:
- Էջ Ը15. ցուցանակն ուսուցանում է, որ բոլոր բաները հնարավոր են Հիսուս Քրիստոսի օգնությամբ:
- Էջեր Ը20-Ը23. Պողոսը հավատավոր մարդու օրինակ է ծառայում:

Այս ամսագիրը միասին կարդալիս, ուշադրություն դարձրեք, թե Հիսուսը և Երկնային Հայրը ինչպես են օգնում մարդկանց յուրաքանչյուր պատմվածքում: Կարող եք ընդգծել այն բառերը, որոնք նկարագրում են մարդկանց դժվարությունները: Ապա շրջանակի մեջ վերցրեք այն բառերը, որոնք նկարագրում են, թե ինչ օգնություն են նրանք ստանում: Ընտանիքով խոսեք նրա մասին, թե ինչպես են երբեմն փորձությունները հեռացվում մեզանից, իսկ որոշ դեպքերում էլ՝ ինչպես ենք մենք ուժեղանում, անցնելով փորձությունների միջով: Ամեն դեպքում, Հիսուսը և Երկնային Հայրը սիրում են մեզ և մեր կողքին են:

Ուրախ ամիս ենք ձեզ ցանկանում,
Ընկեր

Ինչպես ուղարկել ձեր երեխայի արվեստի գործը կամ նրա փորձառության պատմությունը *Լիահոնային:*

Բացեք liahona.ChurchofJesusChrist.org և սեղմեք «Ներկայացնել հոդված կամ կարծիք»: Կամ ուղարկեք է-փոստով liahona@ChurchofJesusChrist.org, ընդգրկելով ձեր երեխայի անունը, տարիքը, բնակության քաղաքը և այս թույլտվության հայտարարությունը. «Ես, [ձեր անունը], թույլ եմ տալիս Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցուն, օգտագործել իմ երեխայի ուղարկածը Եկեղեցու ամսագրերում, Եկեղեցական կայքերում և սոցիալական մեդիայի հարթակներում»: Անհամբեր սպասում ենք ձեր նամակներին:

Գտեք ներսում թաքնված Լիահոնան:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ը2 Սիրել մարդկանց, ինչպես Հիսուսն է մեզ սիրում

Ը4 Փրկող աղոթքը

Ը6 Ողջույններ Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետությունից

Ը8 Ես չեմ ցանկանում տարբերվել

Ը10 Առաքյալներ ողջ աշխարհում. Երեց Սթիվենսոնի այցը Չիլի

Ը11 Առաքյալներ ողջ աշխարհում. Երեց Ռենլանդն այցելում է երեխաներին

Ը12 Սպիտակ գլխարկ Ֆլորենսի համար

Ը14 Արդյո՞ք պետք է շարունակեի կարդալ:

Ը15 Պայծառ միտք. Ես կարող եմ անել ամեն բան Քրիստոսի միջոցով

Ը16 Հորդոր տաճարի մասին

Ը17 Ցույց տուր և ասա

Ը18 Քաջարի օրինակներ. Ծառայել Տիրոջն իսպաներեն

Ը20 Սուրբ գրությունների պատմություններ. Պողոսի միսիոներական ճամփորդությունները

Ը23 Գունավորելու էջ. Հիսուսը կօգնի ինձ դժվար գործերում

ԸՆԿԵՐ ԱՄՍԱԳՐԻ ԿԱՋՄԻ ՎՐԱ
Նկարը՝ Մեքի Պամինտուանի

© 2019 BY INTELLECTUAL RESERVE, INC. ԲՈԼՈՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱՊԱՀՎԱԾ ԵՆ

ARMENIAN
4 02186 10201 9